



2

Թռչնագրիպը նորից է թելածուն

Անտիուտոպիա «Անիծյալ լեռան» ստորոտում

6



7

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը Չե Գեւարան ողջ է



ով իրագրելված է, նա լուսանկարված է

արտակարգ թերթ

N 46 (271)

19.12.2008 - 25.12.2008

www.emergency.am

Սպուլգել եւ կապարեւազործել Վթար ՀԱԷԿ-ում. բա որ հանկարծ... Ուսումնական վարժանք



17 դեկտեմբերի, 2008 թվական

Առավոտյան ժամը 06.55

ՀՓԾ օպերատիվ կառավարման վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում, Արմավիրի եւ Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների դիսպետչերական կետերում ստացվում են «Ատոմ 7» ազդանշանը: Սա նշանակում է, որ ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական պարամետրերը դուրս են եկել անվտանգ շահագործման սահմաններից:

գերի՝ արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովների եւ տարահանման հանձնաժողովների անդամների ազդարարում:

Ժամը 07.30

ճգնաժամային կառավարման կենտրոն է հաղորդվում «Ատոմ 4» ազդանշանը, ինչը նշանակում է՝ տեղի է ունեցել Ատոմակայանի նախագծային վթար:

Ժամը 07.00

ՀՀ պետական կառավարման մարմինների ղեկավարները կազմակերպում են արձագանքող վթարային խմբերի ազդարարում եւ հավաք մշտական աշխատավայրերում, կազմակերպում նախարարությունների օպերատիվ խմբերի աշխատանքը:

Ժամը 08.30

Հաղորդվում է «Ատոմ 3»-ը. սա նշանակում է, որ Ատոմակայանի արտանախագծային վթարի սպառնալիքն իրական է:

Ժամը 08.50

Արդեն հաղորդվում է «Ատոմ 1» ազդանշանը՝ տեղի է ունեցել արտանախագծային վթար:

Արմավիրի եւ Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների դիսպետչերները կազմակերպում են մար-

Ազդանշանները ոչ թե իրական, այլ ենթադրյալ են: >>> 4

2008-ի կլիմայական առանձնահատկությունները Հայաստանում



Եւ Արարատյան դաշտում -21...-26 °C, առանձին օրերին մինչեւ -28 °C: Այդ օրերին Արարատյան դաշտում օդի օրական միջին ջերմաստիճանը 14-16 աստիճանով ցածր էր նորմայից: Խիստ ցածր ջերմաստիճաններն Արարատյան դաշտում դարձան որոշ պտղատու ծառատեսակների ցրտահարման պատճառ: Պետք է նշել, որ վերջին հարյուրամյակի ընթացքում ջերմաստիճանի նման ֆոնը եւ բացարձակ արժեքով, եւ տեղողությամբ՝ 1972 թվականից հետո գրավեց երկրորդ տեղը:

+30...+35 °C-ի սահմաններում, ինչը 5-6 աստիճանով բարձր էր այդ օրերին երբեւէ գրանցված առնաբարձր ջերմաստիճանից:

Երրորդ առանձնահատկությունն այս տարվա չոր եւ տաք աշունն էր: Հոկտեմբեր-նոյեմբերին հանրապետության տարածքում գերակշռում էին անտիցիկլոնային դաշտը եւ հարավ-արեւելքից չոր օդային հոսանքների ներհոսքերը: Ստեղծված սինոպտիկական իրադրության արդյունքում տեղումների քանակն այս ամիսներին կազմեց միջինը 30-60 տոկոս, առանձին վայրերում՝ նույնիսկ ավելի պակաս: Օդի ջերմաստիճանը նորմայից բարձր էր 1-2, առանձին օրերին 2-4 °C-ով:

Օդերևութաբանական առանձնահատկություններով այսպիսին էր 2008 թվականը: Հուսանք, որ 2009-ին եղանակային պայմաններն անակնկալներ չեն մատուցի մեր բնակչությանը:

Այս տարվա եղանակակլիմայական պայմանները Հայաստանի տարածքում իրենց բազմամյա միջին արժեքների համեմատությամբ աչքի ընկան բավական շեշտված շեղումներով:

Առաջին կարեւոր առանձնահատկությունն այն էր, որ 2008 թվականի հունվարի 7-24-ը, պայմանավորված հյուսիս-արեւելքից արկտիկական ցուրտ օդային զանգվածների ներխուժումով, հանրապետության տարածքում դիտվեց օդի ջերմաստիճանի խիստ ցածր ռեժիմ: Հատկապես ցածր ջերմաստիճաններ գրանցվեցին Շիրակում -31...-36

Երկրորդ առանձնահատկությունն այս տարվա աննախադեպ տաք եւ չոր ապրիլն էր: Ապրիլի 21-29-ը Արարական թերակղզու անապատային շրջաններից Հայաստանի տարածք ներթափանցող տաք եւ չոր օդային հոսանքները մեր մթնոլորտին հաղորդեցին աննախադեպ բարձր ջերմություն: Ապրիլի վերջին տասնօրյակում միջին օրական ջերմաստիճանը նորմայից բարձր էր 8-10 աստիճանով: Այդ օրերին Արարատյան դաշտում եւ Երեւանում օդի առավելագույն ջերմաստիճանը տատանվում էր

Գագիկ Սուրենյան
Հայպետհիդրոմետի
օդերևութաբանական
կանխատեսումների
բաժնի պետ

«Էլիտ գրուպ» առաջարկում է կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլևս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երագել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպ» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երագանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մեներջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար: Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:

արագ արձագանքման ծառայություններ



<<< 2 Ավրոպահար

Դեկտեմբերի 14-ին ահագնագ է ստացվել, որ Ստեփանակերտ-Յաղոբի Սարուշեն-Կարմիր շուկա ճանապարհահատվածում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար: «Մերսեդես» մակնիշի մարդատար մեքենան կորցնելով ղեկի կառավարումը, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի

մասից եւ գլորվել ծորը: Վթարի հետեւանքով վարորդը՝ 1977թ. ծնված Վ. Ասրյանը ստացած ծանր մարմնական վնասվածքներից՝ հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին մահացել է, իսկ ուղեւոր, 1979թ. ծնված Վ.Յայրիյանը ստացել է թեթեւ վնասվածքներ եւ հրաժարվել բուժօգնությունից: Փրկարարները մեքենան դուրս են բերել ծորից:

Ջենք-զինամթերք

Դեկտեմբերի 11-ին Մարտունու շրջանի Վազգենաշեն գյուղի բնակիչ, 1975 թ. ծնված Ա. Օհանյանը ԴՇԿ-տիպի գնդացի-րի 12,7 մմ տրամաչափի փամփուշտի պայթյունից ստացել է աջ ոտքի, եւ ձախ ձեռքի վնասվածքներ:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Նահրա Եղիազարյան



Գիտե՛ք արդյոք

...որ մի անգամ Ալեքսանդր Երրորդ կայսրը փրկել է իր ընտանիքին: 1888 թ. հոկտեմբերին հարավից եկող ցարական զնացքը վթարի է ենթարկվում Խարկովից 50 կմ հեռավորության վրա: Գնացքի վագոններից յոթը ջարդուկաբար են լինում: Կայսերական ընտանիքն այդ պահին գտնվում էր վագոն-ռեստորանում: Վթարի հետեւանքով վագոնի առաստաղը պոկվում է, սակայն Ալեքսանդր III-ը կարողանում է աներեւակայելի ուժով պահել այն իր ուսերին, մինչեւ ընտանիքի անդամները

խը տասնմեկ երեխա է ունեցել: ...որ ավստրիական ֆուտբոլի թիմերում կա ոչ թե 11, այլ 18 խաղացող:

...որ Պետրոս Առաջինի օրոք պղնձե ռուբլին իրենից ներկայացնում էր ավելի քան կես կիլոգրամ կշռող մետաղյա քառանկյուն սալ: Այն ժամանակ մեկ ռուբլով կարելի էր գնել սկյուռի 200 մորթի, 27 կիլոգրամ միս կամ ձկնեղեն, 48 կիլոգրամ ալյուր կամ 41 կիլոգրամ աղ:

...որ ելակը միակ պտուղն է, որի կորիզները դրսի կողմից են:



դուրս գան այնտեղից: ...որ Աֆանասի Նիկիտինի Յնդկաստան կատարած հայտնի ուղեւորության մասին պատմող «Ճանապարհորդություն երեք ծովերից այն կողմ» աշխատության վերջին էջը գրված է թուրքերեն, արաբերեն ու պարսկերեն լեզուների խառնուրդով, բայց ռուսերեն: Դա արվել էր հատուկ նպատակով՝ որոշ հետաքրքիր տեղեկություններ թաքցնելու համար: «Ծածկագիրը» վերծանելուց հետո պարզվել է հետեւյալը. «Թեթեւաբար կանայք շատ են, դրա համար էլ նրանց գինը ցածր է»: Այնտեղ նշված է եղել նաեւ նրանց ծառայությունների գնացուցակը: ...որ Իոհան Սեբաստիան Բա-

Այն նաեւ C վիտամինի հարուստ աղբյուր է: Յարյուր գրամ էլակի մեջ պարունակվող վիտամինի քանակությունը բավարար է մարդու օրական պահանջը լրացնելու համար:

...որ աշխարհում ամենամեծ վարդի թուփն աճում է ԱՄՆ-ի Արիզոնա նահանգում: Այն տնկել են 18-րդ դարի վերջին, իսկ հիմա թփի բնի տրամագիծը հիմքի մոտ շուրջ 1,5 մետր է կազմում: Ծաղկման շրջանում դրա վրա ավելի քան 200 հազար վարդ է բացվում:

...որ Յուդան Յիսուսին շատ էժան է մատնել: Այն ժամանակ Պաղեստինում երեսուն արծաթով կարելի էր ձեռք բերել ընդամենը մեկ հիվանդ ու միայն ստրուկ:

սեյսմիկ պաշտպանություն

Դեկտեմբերի 11-17-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Յայաստանի տարածքում գրանցել են 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկու երկրաշարժ: Դեկտեմբերի 12-ին, ժամը 01:25-ին 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Գառնի գյուղից 13 կմ հյուսիս-արեւելք, որը երեսնամյա զոտում է 3 բալ ուժգնությամբ: Նույն օրը նույն էպիկենտրոնային զոտում հետեւել է 3-4 բալ ուժգնությամբ երկրորդ սեյսմիկ ցնցումը:

Տարածաշրջանում. տեղի է ունեցել 3 բալ եւ ավելի ուժգնությամբ հինգ երկրաշարժ: Դեկտեմբերի 13-ին Իրանում, խոյ քաղաքից 11 կմ հարավ-արեւմուտք, գրանցվել է 4-5 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Յաջորդ օրը Իրան-Թուրքիա սահմանային զոտում, խոյ քաղաքից 58 կմ արեւմուտք, տեղի է ունեցել 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Այդ օրը Իրաքի Կուսանյակ քաղաքից 21 կմ հարավ-արեւելք գրանցվել է երկրաշարժ, որի ուժգնությունն

էպիկենտրոնային զոտում կազմել է 5 բալ: Դեկտեմբերի 15-ին Թուրքիայի Յորասան քաղաքից 30 կմ հարավ տեղի է ունեցել 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Դեկտեմբերի 16-ին 3 բալանոց սեյսմիկ ցնցում է գրանցվել Կրաստանի Դմանիսի քաղաքից 10 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով ուժեղ երկրաշարժ չի գրանցվել:

ՍՊԱԾ գործակալություն

Հոսանքային ծառայություն 1-03 Երևան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2984 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 367 մարդ: Եղել է մանկական 191 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 38 երեխա: Գրանցվել են 41 մահ եւ 15 դժբախտ պատահար:

Դեկտեմբերի 11
Արցախի փողոցում տեղի ունեցած վթարի հետեւանքով 40-ամյա մի տղամարդ ստացել է գլխուղեղի վնասվածք եւ տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Դեկտեմբերի 12
Լեւոնգորայան փողոցում վրաերթի ենթարկված 50-ամյա Ա. Շահումյանը՝ գլխուղեղի վնասվածքով, եւ 23-ամյա Ա. Աբաղյանը՝ ներքին արնահոսությամբ, տեղափոխվել են «Արմենիա» բժշկական կենտրոն:

Արամի 42 հասցեից բազմակի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել բարձրությունից ընկած 62-ամյա Ա. Գրիգորյանը:

Դեկտեմբերի 13
Պարոնյան փողոցի 28 շենքի 6-րդ հարկից ընկել է մոտ 70 տարեկան մի տղամարդ եւ մահացել:

Դեղորայքային թունավորումով Նուբարաշենի հոգեբուժարանից «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 32-ամյա Յ. Նիկոսյանը:

Լեւոնգորայան եւ Սեբաստիա փողոցների խաչմերուկում տեղի ունեցած վթարից տուժել եւ մարմնական վնասվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 22-ամյա Ս. Բաղդասարյանը:

Թիվ 2 համալսարանական հիվանդանոցից դանակահարության հետեւանքով կրծքավանդակի շրջանում ստացած ծակած վերքով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 25-ամյա Ս. Յովսեփյանը:

Դեկտեմբերի 14
Սարկավազի փողոցում (Քանաքեռ) եւ Չարբախի շուկայի մոտ տեղի ունեցած վթարների հետեւանքով տուժել եւ մարմնական վնասվածքներով «Էրեբունի» եւ «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտ-

րոններ են տեղափոխվել 22-ամյա Յ. Յակոբյանն ու 23-ամյա Ա. Աթաբեկյանը:

Դեկտեմբերի 16
Եռաբլուրի մոտ վրաերթի է ենթարկվել եւ գլխուղեղի վնասվածքով «Արմենիա» բժշկական կենտրոն տեղափոխվել 57-ամյա Մ. Նազարյանը:

Քիմիական նյութից թունավորումով վերոնշյալ բժշկական կենտրոն է տեղափոխվել նաեւ Անդրանիկի 76 հասցեում բնակվող 32-ամյա Ս. Պողոսյանը:

Դեկտեմբերի 17
Նոր Նորքի 5-րդ զանգվածում վթարի է ենթարկվել 42-ամյա Ս. Ներսիսյանը, որը բազմակի վնասվածքներով տեղափոխվել է «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Վարդաշեն 68 հասցեում բարձրությունից ընկել եւ բազմակի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 22-ամյա Վ. Անդրյանը:

Եղանակի տեսություն

Դեկտեմբերի 11-ին ամենուրեք, 16-17-ը՝ առանձին շրջաններում դիտվել են տեղումներ՝ 2-18 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Տավուշում եւ Սյունիքի հովիտներում՝ +5...+10, Լոռիում, Արարատյան դաշտում եւ Սյունիքի նախալեռներում՝ +3...+8, Արցախում՝ 0...+5, Լեռ-

նային շրջաններում՝ 0...-5 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Լեւոնային շրջաններում՝ -18...-23 (Աշոցքում՝ -26), Լոռիում՝ -10...-15 (Ստեփանավանում՝ -20), Արարատյան դաշտում, Տավուշում եւ Սյունիքի նախալեռներում՝ -6...-11 (Սիսիանում՝ -23), Սյունիքի հովիտներում եւ Արցա-

խում՝ -2...-7 °C:

Դեկտեմբերի 19-20-ը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, 21-23-ը՝ առանձին շրջաններում սպասվում է ձյուն եւ մառախուղ: Քամին հարավ-արեւմտյան՝ 2-7 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 20-21-ի գիշերը կբարձրանա 4-6 աստիճանով:



Սյուզեթ ԵՆ Կապարեւազործել

<<< 1

Ստուգողական վարժանքը սկսված է

Ստուգվում եւ կատարելագործվում են պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների հմտությունները՝ միջուկային եւ ճառագայթային վթարների



դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման գործում:

Ստուգողական վարժանքի միջոցով գնահատվում է, թե որքանով է իրատեսական «ՀԱ-ԷԿ-ի միջուկային եւ ճառագայթային վթարի դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը»:

Բարձրացնել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության մակարդակը Ատոմակայանի ընդհանուր վթարի հակազդման գործում. սա վարժանքի գլխավոր նպատակներից է:

- Այստեղ Հայաստանի փրկարար ծառայությունը մեծ դեր ունի, - նշում է ՀՓԾ օպերատիվ կառավարման վարչության պետ Սերգեյ Մխիթարյանը, - այն համակարգում է բոլոր նախարարությունների, գերատեսչությունների գործունեությունը՝ կապված բնակչու-

թյան պաշտպանության խնդրի հետ: Առաջին երեք ժամը ցույց տվեց, որ ազդարարման խնդիրը շատ լավ իրականացվեց, բոլորը նախատեսված ժամին ներկայացան, հարցերին հստակ եւ պատասխանում, գիտեն իրենց անելիքը:

Վարժանքին ներկա են շահագրգիռ բոլոր գերատեսչությունների ներկայացուցիչները: Կազմված օպերատիվ խմ-

բերը ներկայացնում են իրենց անելիքներն Ատոմակայանի հնարավոր վթարի դեպքում:

- Մենք հանդես ենք գալիս որպես միջազգային կապի կետ. անհրաժեշտ տեղեկություններ ենք հաղորդում Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը, - ասում է Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն անվտանգության վարչության պետ Աշոտ Մնացականյանը: - Դրանից բացի, իհարկե, վթարի դեպքում անմիջապես իրականացնում ենք իրավիճակի գնահատում, տալիս ենք խորհուրդներ, թե ինչ անեն համապատասխան կառույցները, որպեսզի իրականացնեն մարդկանց պաշտպանությունը:

Անցյալն ու ներկան համեմատում է էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի տեղակալ Լեւոն Շահվերդյանը.

- Մի քանի տարի առաջ, երբ նոր էինք սկսում այս գործով զբաղվել, այս աստիճան պատրաստ չէինք: Իսկ հիմա բացի այն, որ անհրաժեշտ պլաններ կան, նաեւ գործնականում ենք պատրաստ: Վթարի դեպքում կարող ենք օպերատիվ կերպով արձագանքել:

Փոխնախարարը կարելուրում է հատկապես ստուգողական վարժանքի թեման: Ատոմակայանի կարելուրությունն ընդգծելու համար Լեւոն Շահվերդյանը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի գրեթե կեսն Ատոմակայանն է ապահովում: Դրա հետ կապված ցանկացած պատահար, ուր մնաց թե՛ խոշոր վթար, նախ, ճառագայթային մեծ վտանգ է պարունակում, ապա նաեւ՝ լուրջ հարված է տնտեսությանը:

Նման դեպքերում առաջնահերթը բնակչության պաշտպանությունն է, այդ գործում յուրաքանչյուր կառույց իր անելիքն ունի: Հնարավոր վթարի դեպքում անհրաժեշտություն կառաջանա ավելի քան 95 հազար բնակչի տարահանել: Տրանսպորտի եւ կապի նախարարությունը գիտե իր անելիքը: Բնակչության տարահանման համար առանձնացնելու են «Գագել» մակնիշի 695 ավտոմեքենա եւ 30 մարդատար վագոն: Առողջապահության նախարարի տեղակալ Վլադիմիր Դարբինյանն էլ ավելացնում է, որ նման դեպքերում ունեն մասնագիտական խմբեր, հիվանդանոցները նույնպես պատրաստ են, յոդի պատրաստուկների անհրաժեշտ չափաքանակ ձեռք բերելու համար հաշվարկներն արել են, դրանք պետք է ձեռք բերի Պետեզերվների գործակալությունը:

Ստուգողական վարժանքը վեր է հանում նաեւ բաց կողմերը: Արտակարգ իրավիճակների նախարար Միքեյլ Շահգեղյանը կոչ է անում մասնակից գերատեսչություններին ավելի լավ պատրաստվել:

- Պլաններում տեղ գտած թերություններին, ինչպես նաեւ դրանց ներկայացման, քննարկման ընթացքում յուրաքանչյուր բացթողման ավելի խիստ ենք մոտենալու: Ես մի քանի նկատառում ունեմ, որոնք կքննարկեն համապատասխան գերատեսչությունների հետ: Այս ուսումնալարծությունը եւ արված եզրակացությունները մեզ համար կարելու են նաեւ հաջորդ տարվա պլանները կազմելիս եւ միջազգային համագործակցության համար, - նկատում է Արտակարգ իրավիճակների նախարարը:

Ուսումնալարծանքի ողջ ընթացքին հետեւում էր օտարերկրյա դիտորդների պատվիրակությունը, որում ընդգրկված էին ՄԱԳԱՏԷ-ի եւ ԱՄՆ միջուկային կարգավորման հանձնաժողովի ներկայացուցիչները:



- Այս ուսումնալարծությունը շատ արդյունավետ է, - ասում է ԱՄՆ միջուկային կարգավորման հանձնաժողովի ներկայացուցիչ Ֆրենսիս Սքիֆ Յանգը: - Շաբաթվա սկզբին մենք մի քանի հանդիպում ենք ունեցել, որոնց ընթացքում քննարկել ենք, թե ինչպես պետք է այն անցկացվի: Վարժանքի ընթացքում դրսեւորվում են ատոմակայանի ազգային պլանում ընդգրկված տարբեր գործառնություններ, ինչը շատ լավ է: Ինչ վերաբերում է

- Նման վթարներին հակազդելը դժվար գործ է, դա եւ դուք գիտեք՝ ՄԱԳԱՏԷ-ի փորձագետները, գիտենք նաեւ մենք, - նշում է ՀՓԾ տնօրենի տեղակալ Արամ Թանանյանը: - Սակայն ամեն ինչ անում ենք, որ բնակչության պաշտպանությունը մեր երկրում բարձր մակարդակի վրա լինի: Դա անելու համար մենք հաշվի ենք առնում եւ՝ ձեր, եւ՝ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի խոր-



հանրային իրազեկմանը, ապա դա չափազանց կարելուր խնդիր է: Անհրաժեշտ է, որ նման դեպքերում բոլոր բնակիչները միատեսակ ուղերձներ ստանան եւ հստակ իմանան, թե ինչ է տեղի ունեցել: Այսինքն՝ տվյալ խնդրին առնչվող բոլոր կազմակերպությունները պետք է «խտեն» մեկ ձայնով:

հուրդները: Այս կոմիտեի հետ մենք երկար տարիներ սերտորեն համագործակցում ենք:

Վերջում հնչում են բարեմաղթանքները, որ վթարները միայն ենթադրյալ լինեն, իսկ նման հավաքներն՝ ուսումնալարծանքի տեսքով:

ՆԵՒԻ Հարությունյան





մասնագետի անկյուն

«Մեր գիտական ներուժը չի օգտագործվում»

Բնապահպանության եւ կենսագործունեության անվտանգության գիտությունների միջազգային ակադեմիայի հայկական մասնաճյուղը 2009 թվականի հունվարին նշելու է հիմնադրման տասնամյակը: Ակադեմիայի կենտրոնական գրասենյակը գտնվում է Սանկտ-Պետերբուրգում: Այժմ այն 75 անդամ ունի՝ դոկտոր-պրոֆեսորներ, գիտությունների թեկնածուներ:

Ակադեմիայի նախագահ, բզթ., ֆիզիոլոգ Մեսրոպ Խամբարյան

- Ակադեմիան գործունեություն է ծավալում երկու հիմնական ուղղություններով՝ կյանքի անվտանգություն, արտակարգ իրավիճակներ եւ բժշկական օգնության հարցեր: Մեր կազմում ընդգրկված են շրջակա միջավայրն ուսումնասիրող բոլոր գիտությունների ներկայացուցիչները, ովքեր ամենաբարձր մակարդակով իրականացնում են տարաբնույթ գիտական ուսումնասիրություններ: Արդեն տասը տարի է, ինչ հրատարակում ենք գիտական 'Вестник' ամսագիրը, որը լույս է տեսնում տարեկան երկու անգամ: Կազմակերպության անդամները՝ հիմնականում ակադեմիկոսներ, հենց այստեղ են տպագրում՝ կյանքի անվտանգության եւ բնապահպանությանը վերաբերող իրենց աշխատությունները, քանի որ կյանքի բոլոր ոլորտներն այս կամ այն կերպ առնչվում են բնապահպանությանը: Չկա մի սապարտեզ, որ շրջակա միջավայրի հետ կապ չունենա: Ամսագրում, որն ի դեպ արտոնագրված է, կարող են տպագրվել նաեւ հայցվորները: Այլ կերպ՝ մեր ամսագրում տպագրված հոդվածները գիտական են համարվում: Մենք դա՝ մեր մեծագույն հաջողությունն ենք համարում:

Մենք շատ մեծ հնարավորություններ ունենք: Կարող ենք խոշոր գիտաժողովներ անցկացնել: Շատ օգտակար գործ է, բայց պետության կողմից աջակցություն չի ցուցաբերվում: Մեր հզոր գիտական ներուժը չի օգտագործվում

մեր երկրի օգտին: Ազգային ակադեմիայում չկա այնքան մասնագետ, որքան մեր կազմակերպությունում: Իսկ մեր ակադեմիկոսներն աշխատավարձ չեն ստանում, իրենք են անդամավճարներ մուծում, որոնցով էլ հիմնականում հոգում ենք մեր ամսագրի տպագրության ծախսերը:

Չնայած նման պատկառելի ներկայացուցչական կազմին եւ կատարվող ուսումնասիրությունների արդիականությանն ու կարեւորությանը, ակադեմիայի գործունեությունն այնքան էլ հայտնի չէ հասարակությանը: Կազմակերպությունը նույնիսկ սեփական գրասենյակ չունի, այլ ժամանակավորապես հանգրվանել է ռադիոֆիզիկայի ինստիտուտի տարածքում: Ինտերնետային կայքը նույնպես ճոխություն է: Գիտականներն իրենց նման շայլություն թույլ տալ չեն կարող. ֆինանսավորում չունեն:

- Ակադեմիան կարող է ամենաբարձր մակարդակով խորհրդատվություն տրամադրել: Պետական աջակցությունը մեծապես կօգներ մեր գործունեությանը, քանի որ մենք մի քանի հոգով ենք կազմակերպում տպագրությունը, նույնիսկ սրբագրող չունենք: Եղել ենք բնապահպանության բոլոր նախարարների մոտ, ծանոթացրել ենք մեր կազմին, որտեղ ընդգրկված են դոկտոր - պրոֆեսորներ, ակադեմիկոսներ, խոշոր հաստատությունների ղեկավարներ: Մեր աշխատանքային եւ սեմինարների պլաններն ենք ներկայացրել : Ոչ մի արձագանք: Իսկ մենք առաջին հերթին ուզում ենք օգուտ տալ մեր երկրին:

Վիլեն Սեփանյան. Ակադեմիայի փոխնախագահ, բզթ., ԱՊՀ Արգիական խորհրդի նախագահի տեղակալ

- Մենք բոլորս էլ աշխատում ենք մեր մասնագիտություններով: 300 համակարգից 12 հոգի ակա-

դեմիայի անդամ է: Մենք հրատարակչական լուրջ գործունեությամբ ենք զբաղվում: Օրինակ, կարող ենք նշել «Հայաստանի սոցիալիզմը» մեկնաբանությունը, որն ամփոփում է մինչ այժմ եղած ողջ նյութը: Մեր պետությունը տարեկան մեկ միլիոն դոլար է ծախսում սողանքների հետեւանքների վերացման համար: Այս աշխատության մեջ ոչ միայն դրանց ծագման պատճառներն են ներկայացված, այլեւ իրականացված է ռիսկի գնահատում: Տրված են կոնկրետ խորհուրդներ, թե ինչ միջոցառումներ է անհրաժեշտ ձեռնարկել՝ դրանց կանխարգելման համար:



Կարող ենք ասել, որ, իրոք, մեր ակադեմիայի գիտական ներուժը չափազանց հզոր է, բայց, ցավոք, մենք միայն գիտության մարդիկ ենք, չենք կարողանում մեզ գովազդել: Մենք, փառքի ու ճանաչման չենք ձգտում, այլ ուզում ենք, որ մեր ծայրը լսելի դառնա, որ մենք ավելի ակտիվ մասնակցենք կենսական նշանակության որոշումների կայացմանը: Արտակարգ իրավիճակների ոլորտում արդեն աշխատում ենք, առանց մեր մասնակցության միջազգային որեւէ սեմինար չի անցկացվում: Մեր աշխատանքներով հետաքրքրվում են: Ճիշտ է, մենք հաճախ գումար չենք ունենում արտասահմանյան գիտաժողովների մեկնելու համար, բայց մեր հոգվածները բոլոր

րին են հետաքրքրում: **Գիտնականները նշեցին նաեւ, որ այսօր աշխարհի առաջատար երկրները լուրջ ուշադրություն են դարձնում բնապահպանական խնդիրներին: Դրանց կարեւորությունն այնտեղ գիտակցում են: Բնապահպանությունը պետական հարց է, ոչ թե մասնավոր խնդիր: Չզբաղվելու դեպքում՝ հետեւանքները կարող են լուրջ լինել: Օրինակ, ճապոնիան առաջընթաց արձանագրեց այս ոլորտում, դառնալով բնապահպանական տեսանկյունից ամենամեծ մասնակց երկրներից մեկն այն դեպքում,**

որեւէ հաղորդում լինի այդ թեմայով, որին մենք էլ կարող էինք մասնակցել: Մենք փառքի, կամ փողի չենք ձգտում, մեզ հուզում է՝ այս խնդիրների համոզեալ պետական մոտեցման բացակայությունը միայն: Տեղեկատվական քաղաքականություն է պետք մշակել, իսկ մենք ոչինչ չենք անում: Ընդհակառակը, մենք, օրինակ, այսօր գնում ենք ավելի մեծ չափերի, հզոր շարժիչներով ավտոմեքենաներ, որոնք ավելի մեծ վնաս են հասցնում շրջակա միջավայրին: Մենք ուզում ենք բարձրածայնել այս խնդիրների մասին, տեղեկացնել, որ ժողովուրդն էլ մոբիլիզացվի: Գրագիտությունը պետք է բարձրացվի: Մեր պետությունը թեպետ ստորագրել է բոլոր կոնվենցիաները, բայց մեկ է՝ ոչինչ էլ չի արվում: Մեր խնդիրներից ամենաառաջնայինը բնապահպանության ոլորտում բնակչության իրազեկվածության բարձրացումն է:

Փոխնախագահ Վիլեն Սեփանյանի հավաստմամբ՝ Ակադեմիայի գործունեությունը մեծապես նպաստում է հանրապետության գիտական ներուժի աճին:

- Մեր անդամներից ոմանք արդեն գիտական ատենախոսություններ են պաշտպանել: Այդ աշխատանքները շատ կարեւոր են Հայաստանի համար, քանի որ մեր երկրին սպառնում են գրեթե բոլոր աղետները:

Մեր ակադեմիային անդամակցելու համար արդեն Վրաստանից են դիմում: Արցախի թեմի առաջնորդը, ով աստվածաբանության ոլորտում գիտական աստիճան է ստացել Սանկտ-Պետերբուրգում, նույնպես ցամաքային է հայտնել անդամակցել մեր կազմակերպությանը: Մնում է, որ մեր կառավարությունն օգտագործի մեր հնարավորությունները՝ ի բարօրություն մեր երկրի:

Զրույցը վարեց Նուրե Գրիգորյանը

Շնչառական թուլյներ

Թունավորումների մեջ մեծ տեղ են զբաղեցնում շնչառական թունավորումները, որոնց խոշոր մասը հետեւանք են շնչու գազի: Հատկապես ծնունդ անիսներին, երբ շատերը տները տաքացնում են տարբեր տիպի վառարաններով, շնչու գազից թունավորումների հավանականությունը կտրուկ մեծանում է: Իհարկե, նման թունավորումներից խուսափելու լավագույն միջոցը անվտանգության կանոնների պահպանումն է, սակայն միշտ չէ, որ հնարավոր է լինում խուսափել թունավորումներից: Այս դեպքում արդեն հարկ է իմանալ՝ ինչպես վարվել նման թունավորումների ժամանակ:

Տուժածի մաշկի գունատությունը կամ կապտավուն երանգը թթվածնի անբավարարության հետեւանք են, որոնք կարող են առաջանալ շնչու գազից: Տարիներ շարունակ շնչու գազի թունավորման

նշան է համարվել մաշկի եւ շրթունքների վառ բալի կամ կարմրականաչավուն երանգը: Սակայն բավարար չէ այս նշանների առկայությամբ փաստորոշել շնչու գազով թունավորում: Կարմիր գույնն ի հայտ է գալիս շատ ուշ՝ մահից անմիջապես առաջ, ուստի թունավորման աստիճանը որոշելու համար պետք չէ առաջնորդվել միայն մաշկի գույնով:

Շնչառական բոլոր թունավորումների դեպքում տուժածներն անհապաղ թթվածնի կարիք ունեն: Հնարավորինս շուտ տուժածին հեռացրեք շնչու գազի աղբյուրից (առանց վտանգելու ձեր կյանքը): Լինում են դեպքեր, երբ միայն թարմ օդ ապահովելը կբավարարի տուժածին, եթե իհարկե, նրա գիտակցությունը տեղն է: Անգիտակից տուժածին դուրս բերեք մաքուր օդ, ստուգեք շնչուղիները: Եթե նա չի շնչում կատարեք արհեստական շնչառություն: Մաքուր օդում արհեստական շնչառություն կատարելիս տուժածից թունավորվելը բացառվում է:

Թունավորման նշանները

Շատ կարեւոր է ժամանակին փաստորոշումը: Տուժածի վիճակի ուշադիր զննումը եւ պատահարի վերաբերյալ վկանների տված տեղեկությունները կօգնեն ճիշտ փաստորոշել թունավորումները: Նվազագույն կասկածի դեպքում անգամ բժիշկ կանչեք:

Ուշադիր զննեք շրջապատը: Տարօրինակ հոտերը, վառվող կրակը եւ այլ նշաններ կարող են շատ բան հուշել: Կատարեք տուժածի նախնական զննում եւ, եթե համոզվեք, որ տուժածի կյանքին անմիջական սպառնացող վտանգ չկա, կատարեք երկրորդային զննում:

- Թունավորման նշաններն են.
 - հիվանդագին տեսք.
 - սրտխառնոց.
 - փսխում.
 - լուծ.
 - որովայնի եւ կրծքավանդակի ցավեր.
 - սառը քրտինք.
 - շնչառության դժվարացում.
 - գիտակցության կորուստ.

Գնցումներ:

Թունավորումների նշան կարող են լինել շրթունքների շրջանում եւ բերանի խոռոչում այրված վերքերը:

Եթե եզրահանգում եք, որ տուժածը թունավորված է, փորձեք գտնել հետեւյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ թույն է առկա.
- Ի՞նչ քանակությամբ.
- Ե՞րբ է տեղի ունեցել թունավորումը:

Այս հարցերի պատասխանները կօգնեն ճիշտ կողմնորոշվել եւ առաջին օգնություն ցույց տալ տուժածին:

Առաջին օգնությունը

Թունավորման բարդությունը կախված է ընդունած թույնի տեսակից ու քանակից, մարմնի ներթափանցման ուղուց, թունավորման պահից անցած ժամանակից, նաեւ տուժածի տարիքից, մարմնի չափերից ու զանգվածից: Պետք է հետեւել առաջին օգնության հետեւյալ հիմնական փուլերին.

- զննեք շրջապատը եւ համոզվեք, որ ապահով է տուժածին մոտենալը: Աշխատեք հասկանալ, թե ինչ է պատահել.
- անհրաժեշտության դեպքում տուժածին հեռացրեք թունավոր միջավայրից.
- կատարեք տուժածի նախնական զննում՝ ստուգելով նրա շնչուղիների անցանելիությունը, շնչառությունը եւ արյան շրջանառությունը.
- տուժածի կյանքին սպառնացող իրավիճակներում ցուցաբերեք առաջին օգնություն.
- գիտակցության առկայության դեպքում կատարեք երկրորդային զննում.
- ահազանգեք շտապ օգնություն.
- մինչեւ շտապ օգնության ժամանակը սպասեք դեպքի վայրում, տուժածի կողքին, եւ կատարեք շտապօգնության հերթապահի ցուցումները.
- թույլ մի՛ տվեք տուժածին ուտել կամ խմել առանց բժշկի թույլտվության:



անտիուտոպիա

Ավիկ Ավանեսյան

Բոլոր դռները

(Հնգաչափ տարածության անդունդներում)

Սյորենը թերթում է Անանդի նոթատետրը: Բացի նրանից, որ համակարգիչների դարաշրջանում արդեն իսկ բավական անսովոր բան է թվում նոթատետրի գոյությունը, պարզ է դառնում նաև, որ Անանդը սիրում էր գծանկարել: Ուշագրավ գծանկարներ են դրանք՝ երբեմն ուղեկցված հուզական լիցք ունեցող գրություններով, որոնք մտածելու տեղիք են տալիս: Հատկապես, երբ խոսում են աշխարհի գոյության մասին, որոնք, հեղի-

նակի կարծիքով, մարդիկ կորցրել են՝ դրանց հետ կորցնելով նաև շատ ու շատ կարևոր բաներ: Նոթատետրի էջերից մեկում պատկերված են նաև միանման դեմքերով ինչ-որ Կաստոր ու Պոլուքս, ապա՝ սարդուտայնապատ ու կիսաբաց մի դուռ, որոնք պարզապես նկարչի երեսակայության արդյունք համարելը Սառային ու Սյորենին հավանական չեն թվում: Դրանք ավելի շատ նմանվում են իրականության...

Սկզբը՝ 263-270 համարներում

9.

Այս դեմքերին, ճիշտն առանց, ոչ մի տեղ չեն հանդիպել, բայց անուններն ահա... դրանք հայտնի անուններ են, բավական հայտնի, այնպես որ...

- Ինչպե՞ս թե՛ բավական հայտնի անուններ են...

- Համբերիր, Սառա, համբերիր, այդ անուններն այնքան հայտնի են, որ մոռացվել են վաղուց: Ես ուզում էի ասել՝ դիցաբանությանը հայտնի անուններ են: Կաստորն ու Պոլուքսը երկվորյակ եղբայրներ են՝ Յուպիտերի որդիները, առաջինը մահկանացու էր, երկրորդը՝ անմահ, թեպետ Կաստորի մահից հետո եղբայրն իր անմահության կեսը նվիրեց նրան: Խորհրդանշում են հավերժ իրար հաջորդող կյանքն ու մահը, լույսն ու խավարը: Ուրիշ մի տարբերակում նրանք համարվում են մարդկանց օգնականներ: Մեկը մյուսին չի խանգարում, կարծես. ինչո՞վ, օրինակ, մարդկանց օգնականները չեն կյանքն ու մահը: Լավ, սա թողնենք: Դռնից սկսենք: Գուցե իսկապես էլ սա իրական դուռ է, - Սյորենը կրկին դարձավ դեպի Նորան, - Նորա, խնդրում եմ, ուշադիր նայիր այս նկարին, ձեր տանն այսպիսի պատկեր հիշեցնող որեւէ բան նկատել ես, գուցե սա իսկապես դուռ է, եւ գուցե Սառան չի սխալվում...

լույսն ու խավարը, որի վարագույրը կիսաբաց էր եւ որը նայում էր դեպի արեւմուտք՝ դեպի ներքեւ, որտեղ փռված էր իսկաբնակավայրը: Որոշակի ոչինչ չէր երեւում: Դարձյալ նույն պատկերն էր՝ հզոր արհեստական լույսերը՝ ասես մշտական աղջամուղջի մեջ:

- Բայց, արդյո՞ք, միայն գեղեցիկ, - մտածկոտ դիտելով անկիրք այդ աղջամուղջը՝ շարունակեց Սյորենը, - որեւէ բանի ասել «գեղեցիկ», նշանակում է հրաժարվել դրանից: Կամ պատրաստ լինել հրաժարվելու... Հաշիվները մաքրել, ինչպես ասում են, դնել թանգարանում: Այդ բառի մեջ վերաբերմունք չկա, այդ բառը շարունակություն չունի: Շարունակություն... հենց դա: Շարունակություն, որին ես սկսել եմ սպասել, կարծես թե... Կարծես թե, եկել են ընդհատված պատմությունները շարունակելու ժամանակները... Հը, Սառա, համաձայն չե՞ս, շարունակվե՞ն, թե՛ չշարունակվեն ընդհատված պատմությունները...

- Ես քեզ հարց տվեցի, որ պատասխան ստանամ, որոշակի պատասխան, ոչ թե հար-

ցեր, որոնք նման են հանելուկների: Ի՞նչ շարունակության մասին ես խոսում:

- Դե չէ, ինչ հանելուկ, ես պարզապես ուզում եմ ենթադրել, թե, - Սյորենը փոփոխեց ձայնը, - իսկ ինչ կպատահի, եթե ենթադրենք, թե մեր Կաստորն ու Պոլուքսը...

- Ես զգում էի, չեմ կարող դա բացատրել, բայց ես ավելի զգում էի, որ այս տանն ամեն ինչ հնարավոր է, - Նորան էր, խոսում էր, ինչպես քնի մեջ են խոսում՝ դիմելով ոչ ոքի:

- Ի՞նչ, - գրեթե միաժամանակ բացականչեցին Սյորենն ու Սառան սենյակի տարբեր կողմերից, ու Սյորենը, մոտենալով կանանց, արդեն համարյա աղերսագին կրկնեց իր հարցն ու շարունակեց. - Ի՞նչն է հնարավոր, Նորա, ինչո՞ւ էր հնարավոր, ես գիտեմ, որ դու ես մեզ օգնելու, ինչ-որ բան հիշեցիր, երեւի, միայն թե՛ խոսիր, լուռ մի մնա...

- Մտքերս, - ասաց Նորան կամացուկ կարծես թե ինչ-որ բանից զգուշանալով ու շուրջն աչք ածելով, - չեն հավաքվում, ցաքուցրիվ են... Այս տունը, - ու դարձյալ լռեց: Սյորենն ու Սառան նայեցին իրար, ապա՝ Նորային, ապա էլի միմյանց ու անխոս որոշեցին չխանգարել՝ զգալով, որ Նորան ուզում է բան ասել.

- Այս տունը մենք ձեռք բերեցինք երեք տարի առաջ: Այսինքն՝ ոչ թե տունը, այլ տարածքը: Դուք երեւի չնկատեցիք էլ, որ սա սովորական տուն չէ: Չեմ կարողանում, չէ, կարգին բացատրել... Այս բլուրը «Անիծյալ լեռ» են անվանում, ոչ ոք չգիտի, թե ինչու: Մենք, որ եկանք տեղանքին ծանոթանալու, այստեղ տեսանք միայն ավերակ մի կառույց, որը ոչ այն է՝ ինչ-որ հինավուրց տաճար է հիշեցնում, ոչ այն է՝ անհասկանալի նշանակության մի ամրոց: Մի քանի կանգուն սյուն, մի կիսավեր գմբեթ ու կամարներ... այդպիսի բաներ: Անանդն ուզում էր իր տունն ունենալ, բայց որոշեց ավերակին ձեռք չտալ, ավելի ճիշտ՝ ավերակն ամբողջությամբ չքանդել: Այդ-

պես որոշեց: Մեր այս տունն, ուրեմն, գետնոված է մեծ մի ավերակի մեջ: Քաղաքից եկող դա չի նկատում: Իսկ ահա հակառակ կողմից տանը մոտեցողը կտեսնի միայն ավերակն ու, երեւի, գլխի չընկնի էլ, որ այստեղ բնակիչներ կան... Ահա այդ աստիճանները ներքեւի հարկ են տանում, որտեղ մեր խորդանոցն է: Խորդանոցով էլ, ես գիտեմ, որ կարելի է մտնել իմ ասած ավերակի խորքերը, գիտեմ, Անանդն է ասել, բայց ես ինքս ոչ մի անգամ այնտեղ չեմ մտել, խորդանոցում եղել եմ, բայց ավերակն ինձ երբեք էլ չի հետաքրքրել...

- Սա արդեն հետաքրքրական է դառնում, - այս անգամ էլ Սյորենը չհամբերեց, - ինչ ավերակ, ինչ խորդանոց, ասում եմ, չէ, դու պիտի խոսես, Նորա, ես ինչպես չե՞ի նկատել ձեր այդ ամրոցը, «Անիծյալ լեռան» մասին էլ ոչինչ չեմ լսել, մենք կարող ենք հիմա խորդանոց իջնել, ես ուզում եմ տեսնել այդ խորդանոցը...

- Կարող ենք, ինչո՞ւ չենք կարող, - Նորայի հայացքում վերացածության, անտարբերության վերջին նշույլներն էին մարում ասես: Երեւում էր, որ խոսելը, պատմելը որոշակիորեն սփոփում, ավելի հանդարտ էր դարձնում նրան, եւ ինքն էլ սկսում է հավատալ, որ առանց իր օգնության դժվար, գուցե անհնար է լինելու լուծել ամուսնու անհայտացման առեղծվածը: Նա վեր կացավ, նոթատետրը դեռ ձեռքին էր՝ դրեց բազմոցի առջեւի սեղանի վրա, ապա, մի պահ մտածելով, նորից վերցրեց ու մեկնեց դեպի Սյորենն՝ ասելով.

- Սա, այնուամենայնիվ, թող մնա ձեզ մոտ, ինձ հարկավոր չէ, իսկ ձեզ դեռ կարող է պետք գալ... Խորդանոց կարող ենք իջնել, հիմա, միայն սպասուհուն կանչեն:

Նորան քայլեց դեպի աջ կողմի դուռը, բացեց ու ներս մտավ: Երեւի, սպասուհու սենյակն էր: Մեկ րոպե էլ չտեսեց, կրկին բացվեց նույն դուռն ու սենյակ մտան նախ Նորան, ապա սպասուհին՝ Յելենան, որ միջին տարիքի լիքը-լիքը կին էր՝ արտահայտիչ դիմագծերով ու բարեհամբույր ժպիտով: Ձեռքին բանալի կար՝ անսովոր մեծ ու փայլուն:

- Ահա, - ասաց Նորան, - Յելենան է, նա մեզ կուղեկցի:

Սյորենը նկատեց բանալին ու ժպտաց՝ ինքն էլ չիմանալով, թե ինչու, բայց մտքի մեջ շատ էլ տեղին համարեց իր ժպիտը,

որը բոլորովին էլ ուրախության արտահայտում չէր, այլ, գուցե թե, անհասկանալի մի հոգնության: Իսկ հանկարծական այդ հոգնությունն էլ իր հերթին, հավանաբար, ծնունդ էր մուփ մի կռահումի, որը դեռեւս անուն չունեց: Մուփ՝ անանունության պատճառով միայն: Թեպետ ինչու՞ դեռեւս, եթե բոլոր կռահումներն, առհասարակ, դժվար անվանելի են:

- Եթե իջնելու ենք՝ իջնենք, - ձեռքով ցույց տալով վայրընթաց ու ոլորուն աստիճանները՝ ասաց Նորան:

Իսկ Յելենան, որ նկատել էր անսովոր բանալու՝ Սյորենի վրա թողած տպավորությունը, հարկ համարեց փոքրիկ բացատրություն տալ.

- Մեր տան մեջ, - այդպես էլ ասաց՝ մեր տան, - սա միակ դուռն է, որ այս ձեռք ենք բացում՝ բանալիով: Մեր տանտիրոջ ցանկությունն էր դա: Ասում էր՝ դռները պիտի բանալիով բացել, - ու դեմքին նույն ու մշտական ժպիտն էր:


«Այ քեզ բան»՝ համարյա լսելի քրթմնջաց Սյորենը՝ նկատի ունենալով բանալուն եւ դռներին վերաբերող՝ Անանդի միտքը, որը հիշեց Յելենան: «Միթե այդքան նման ենք եղել»՝ արդեն մտքի մեջ զարմացավ Սյորենը:

Մտածելու, առավել եւս՝ զարմանալու ժամանակը չէր, Յելենան ու Նորան արդեն սկսել էին իջնել աստիճաններով: Սյորենն ու Սառան հետեւեցին նրանց: Ընդ որում՝ Սյորենը բոլորովին չէր կասկածում, որ ներքեւում՝ այդ խորդանոց կոչվածում, կա մի բան, որից ոչ ոք տեղյակ չէ: Ստույգ՝ այնպիսի մի բան, որը գուցե նույն դերը կատարի այստեղ, ինչ լաբիրինթոսից Թեսեսին դուրս բերած Արիադնեի կծիկը՝ մեկ ուրիշ «գեղեցիկ» պատմության մեջ՝ անհիշելի ժամանակներում տեղի ունեցած...

Աստիճաններից անմիջապես աջ խորդանոցի դուռն էր: Բանալին անցքի մեջ երկու անգամ պտտելով՝ Յելենան բացեց դուռը եւ հրեց դեպի ներս: Ապա թեթեւակի թեքվեց առաջ, երկարեց ձեռքն ու վառեց լույսը: Հետո քաշվեց մի կողմ՝ հասկացնելով, որ կարող են մտնել ներս: Առաջինը սենյակ մտավ Նորան: Նրան հետեւեցին Սառան ու Սյորենը, ապա եւ՝ Յելենան:

Որեւէ մեկի մտքով չէր անցնի, որ դա հենց խորդանոց է...

Շարունակելի





Բրուցելիոզ. կենդանիները վարակում են մարդկանց

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը



Չե Գեւարան ողջ է

Ո՞վ էր նա: Սոցիալիզմի լուսավորյալ, թե՛ ըմբոստ ավագակ: Ժան Պոլ Սարտրը նրան անվանում էր «Դարի ամենակատարյալ մարդ»: Բոլոր տեսակետներից անկախ՝ եռնեստո Չե Գեւարան վաղուց արդեն դարձել է աշխարհի բոլոր հեղափոխականների «սուրբ հովանավորը»: Չե Գեւարան անկասկած մարդ-լեգենդ է, ընդ որում՝ այդ կարգավիճակը նրան շնորհել է ոչ թե կյանքը, այլ սեփական մահը: Մտահոգ լինելով նրա՝ բնակչության աղքատ եւ ճնշված խավի շրջանում հեղափոխական քարոզչությունից, Բոլիվիայի ազգային բանակը (որին ի դեպ մարդ էլ ու հանդերձավորել էին ամերիկյան բանակն ու կենտրոնական հետախուզական վարչությունը), 1967 թ. հասփշտակում եւ մահապատժի է ենթարկում եռնեստո Չե Գեւարային: Բայց նախքան նրա մարմինը գերեզմանում գաղտնի թաղելը, դահիճները խմբվում են նրա շուրջը՝ «որպես հիշատակ» լուսանկարվելու: Ձիվորականներն ուզում էին ամբողջ աշխարհին ցույց տալ, որ Չե Գեւարան այլևս մեռած է՝ հույս ունենալով, որ նրա սկսած քաղաքական շարժումն էլ նրա հետ կմեռնի: Մտածելով, որ հետագայում լուսանկարը կարող են կեղծված հայտարարել, դահիճները կտրում են Չե Գեւարայի ծեղկերը և պահում ֆորմալդեհիդի մեջ, որպեսզի կասկածի դեպքում կարողանան ապացույցներ ներկայացնել: Սակայն մարդուն սպանելով՝ բոլիվիացի չինովհիկներն ակամա դառնում են նրա մասին լեգենդի հեղինակ:

Գրեթե ամբողջ աշխարհը շրջած լուսանկարն ապշեցուցիչ նմանություն ունի Վերածննդի դարաշրջանի հայտնի նկարի հետ, որի հեղինակն է Անդրեաս Սոնտինյին: Այնտեղ պատկերված է խաչափայտից իջեցված Հիսուս Քրիստոսը: Լուսանկարի մեջ եռնեստոյի դեմքը չափազանց հանգիստ արտահայտություն ունի, իսկ նրա դահիճները հատուկ պատրաստվել, «պճնվել» ու կարգի են բերել իրենց՝ տեսախցիկի առաջ ավելի լավ տեսք ունենալու համար: Նրանցից մեկը մատնացույց է անում Չե Գեւարայի մարմնի վրա եղած վերքը: Մահացածի հեղափոխական գաղափարակիցներն անմիջապես լուսանկարի մեջ այլաբանական իմաստ են գտնում եւ տարածում՝ «Չե Գեւարան ողջ է» կոչը: Այս լուսանկարի շնորհիվ եռնեստո Չե Գեւարան բազմաթիվ մարդկանց հիշողության մեջ մնում է որպես հերոս՝ նահատակված հանուն սոցիալիստական գաղափարների:



Չովունի գյուղի բնակիչ, ազգությամբ եզդի Քյարամ Ջալիլյանի ընտանիքը սերնդեսերունդ զբաղվում է անասնապահությամբ: Կաթն ու կաթնամթերքը նրանց տնից անպակաս են, մեծ մասն էլ վաճառքի են հանում: Քյարամը լավ տեղյակ է բրուցելիոզ հիվանդությունից, տարվա մեջ երկու անգամ բժիշկ է կանչում, որ ստուգի՝ կենդանիներն առողջ են, թե՛ ոչ: - Հո ժողովրդին վարակված սնունդ չե՛նք վաճառելու: Հաճախորդներին չկորցնելու համար պետք է մաքուր ու անվտանգ կաթնամթերք պատրաստել: Համ էլ մեր երեխաներն են դրանից օգտվում, - ասում է Քյարամ Ջալիլյանը: Առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության տվյալներով՝ բրուցելիոզով հիվանդանալու դեպքերը Հայաստանի հանրապետությունում տարեցտարի շատանում են. 2007 թվականի համեմատ այս տարի՝ 2008-ին՝ դրանց թիվն աճել է 1,1 անգամ, գրանցվել է 200-ից ավելի դեպք: Պատճառներից մեկն այն է, որ մեր բնակչությունը չի ձեռքբերում փողոցից, պատահական վայրերից ու պատահական մարդկանցից կաթնամթերք եւ միս գնելու սովորությունը: - Մյուս պատճառը կենդանիների չկանոնակարգված տեղաշարժն է, այսինքն՝ հիվանդ կենդանին մտնում է առողջ հոտ եւ վարակում մյուս կենդանիներին, դրանք էլ իրենց հերթին տեղափոխվում են հոտից հոտ, ու այդպիսով առաջանում են հիվանդության նոր օջախներ, - ասում է Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության գլխավոր մասնագետ Լիանա Թորոսյանը: Բրուցելիոզը վարակիչ հիվանդություն է, որ մարդուն է անցնում հիվանդ կենդանուց: Հիվանդ մարդն այլ մարդու համար վտանգավոր չի լինի չի կարող: Իսկ կենդանուց մարդը վարակվում է նրա հետ անմիջական շփման, վարակված միսը, կաթը եւ դրանից պատրաստված կաթնամթերքն օգտագործելու հետեւանքով: Բրուցելիոզի հարուցիչները բրուցելաններն են, որոնք ջրում ապրում են 5 ամիս, կաթում՝ 45 օր, պանրի մեջ՝ 60 օր, սառեցրած մտում՝ 5 ամիս, կաշվում՝ 2 ամիս, բրդի մեջ՝ 3-4 ամիս: Եռացնելիս բրուցելանները վերանում են անմիջապես, պատերիցացնելիս՝ 5 րոպեում: Առավել հաճախ բրուցելիոզով հիվանդանում են տնային կենդանիները՝ կովերը, ոչխարները, այծերը, խոզերը: Կենդանիների դեպքում հիվանդության մասին հուշում են նրանց անկումները կամ մահացած պտղի ծննդաբերումն ու վիժումները: Բրուցելանները ար-

տաքին աշխարհ են դուրս գալիս կաթի, մեզի ու պտղի միջոցով: Հիվանդ կենդանու միսը հարուցիչներ նույնպես պարունակում է: Մարդը կարող է վարակվել նույնիսկ հիվանդ կենդանու կաշին կամ բուրդը մշակելիս: Հիվանդության գաղտնի՝ ինկուբացիոն շրջանը տեւում է 1 շաբաթից մինչեւ մի քանի ամիս, բայց առավել հաճախ՝ 1-3 շաբաթ: Բրուցելիոզը կարող է սկսվել դանդաղ՝ ունենալով այսպիսի արտահայտություն. ընդհանուր թուլություն, անքնություն, գլխացավ, ցավեր մկաններում ու հոդերում, ախորժակի անկում, մարմնի ջերմության բարձրացում՝ 37,1-37,3 աստիճան: Հաճախ բրուցելիոզն իր մասին իմաց է տալիս կտրուկ եւ միանգամից՝ 39-40 աստիճան ջերմություն, դող, թուլություն, առատ քրտնարտադրություն, սուր ցավեր մկաններում եւ հոդերում, դժվարաշարժություն, ջարդվածության զգացողություն: Հիվանդությունը տեւում է միջինը 3 ամիս, բայց կարող է երբեմն տեւել 1-2 տարի կամ ավելի: Արդյունքում ախտահարվում են արյունատար, նյարդային, սրտանոթային համակարգերը, հենաշարժական, ոսկրահողային և ապարատները: Հնարավոր են նաեւ հաշմանդամություն, հոգեկան խազարում, հղի կանաց մոտ՝ պտուղի վիժում: Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության գլխավոր մասնագետ Լիանա Թորոսյանը մարդկանց խորհուրդ է տալիս չբաղվել ինքնաբուժությամբ, այլ բժշկի դիմել ախտանիշերի հայտնվելուց անմիջապես հետո, որպեսզի ցուցաբերվի համապատասխան բժշկական օգնություն՝ հետազայում բարդություններից խուսափելու համար: Ավելի հեշտ է կանխարգելել հիվանդությունը, քան հետո բուժել ու վերացնել հետեւանքները: Դրա համար նախ եւ առաջ պետք է հետեւել անձնական հիգիենայի կանոններին, կենդանիների հետ շփվելուց հետո անպայման օձառով մանրակրկիտ լվանալ ձեռքերը, անասունների խնամելիս օգտագործել առանձին արտահա-

զուստ: Չի կարելի գնել միս, կաթ ու կաթնամթերք պատահական վայրերից ու մարդկանցից: Գործարանային արտադրության կաթնամթերքն ավելի ապահով է, որովհետեւ անցնում է մշակում՝ համապատասխան ջերմային պայմաններում: Ոչ թե փողոցում, այլ խանութներում վաճառվող միսն է անվտանգ, որովհետեւ համապատասխան ստուգում է անցնում: Բրուցելիոզից խուսափելու համար տնային պայմաններում ստացվող կաթն օգտագործելուց առաջ հարկավոր է եռացնել: Ամենազուլը պետք է լինել պանրի դեպքում, որովհետեւ այն պատրաստվում է հուն կաթից: - Մենք մեր պանիրը երկար ժամանակ աղաջրում ենք պահում, հետո նոր վաճառում, - ասում է Չովունու բնակիչ Քյարամը Ջալիլյանն ու տակառի միջից հանում պանրի գլուխը, - սա արդեն 6 ամիս ջրի մեջ է, բրուցելիոզի ոչ մի բակտերիա չի կարող գոյատեւել այսքան երկար: Պետք չէ նաեւ կենդանիների խնամքի գործում ներգրա-



